ՏԻԳՐԱՆ ԲԱԼԱՅԱՆ

Ծնվել է 1977թ. հոկտեմբերի 29-ին Երևանում:

Կրթությունը

1994-1999 թթ. - ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, պատմաբանի և միջազգային հարաբերությունների մասնագետի որակավորում

1999-2002 թթ. - ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտուրա, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ատենախոսության թեման՝ «Ղարաբաղյան խնդիրը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ.»:

2000-2002 թթ. - ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայի Միջազգային հարաբերություններ ֆակուլտետ:

Աշխատանքային գործունեությունը

1997-2000 թթ. - Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցչություն, մշտական ներկայացուցչի օգնական
2000-2002 թթ. - ՌԴ-ում ՀՀ դեսպանություն, Քաղաքական բաժնի ղեկավարի օգնական
2002-2003 թթ. - ՀՀ ԱԳՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն, կցորդ
2002-2004 թթ. դասավանդել է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում:
2003-2004 թթ. - ՀՀ ԱԳՆ Սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության ՆԱՏՕ-ի բաժին, կցորդ
2004-2007 թթ.- Բելգիայի թագավորությունում, Նիդերլանդների թագավորությունում և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում ՀՀ դեսպանություն, երրորդ, ապա երկրորդ քարտուղար
2007-2008 թթ. - ՀՀ ԱԳՆ Մամուլի և տեղեկատվության վարչության Լրատվամիջոցների հետ կապի բաժնի վարիչի պաշտոնակատար
2007 թ.-ից դասավանդում է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, 2013թ. շնորհվել է դոցենտի գիտական կոչում:
2008-2010 թթ. - ՀՀ ԱԳՆ մամուլի և տեղեկատվության վարչության պետի, ինչպես նաև մամուլի քարտուղարի պարտականությունները կատարող,
2010-2018 թթ. - ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ
2016-2018 թթ. մինչ օրս – ՀՀ ԱԳՆ Լրատվության և հանրային դիվանագիտության վարչության պետի պաշտոնակատար

Հեղինակ է մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածների, ինչպես նաև «Լեռնային Ղարաբաղի խնդիրը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ.» մենագրության, «Բազմակողմ Դիվանագիտություն» և «Արտաքին քաղաքական տեղեկատվական ապահովումը» դասախոսությունների ժողովածուների:

Հայաստանի պատվիրակությունների կազմում մասնակցել է բազմաթիվ գագաթաժողովների և համաժողովների:

Օտար լեզուների իմացությունը
Տիրապետում է ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուների:

Դիվանագիտական աստիճանը
Արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար

Պարգևներ

«Մխիթար Գոշ» մեդալ
Արցախի Հանրապետության «Երախտագիտություն» մեդալ
ՀՀ նախագահի, Ազգային ժողովի, վարչապետի և ԱԳ նախարարի շնորհակալագրեր
«Ջոն Կիրակոսյան» հուշամեդալ
ԼՂՀ ԱԳՆ 20-ամյակի հուշամեդալ
ՀՀ ԱԳՆ Պատվո մեդալ
ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյան» մեդալ

Ընտանեկան կարգավիճակ

Ամուսնացած է, ունի դուստր և որդի:

ՀՀ նախագահի ս.թ. հոկտեմբերի 4-ի հրամանագրերով նշանակվել է Նիդերլանդների Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան և Քիմիական զենքի արգելման կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ (նստավայրը՝ Հաագա):